

ՏԵՐ ԵՒ ՏՆՕՐԷՆ
ՅԱԿՈԲ Յ. ՇԷՔԼԵԱՆ

ՊԵՏԱՍԻԱՆԱՏՈՒ

ՕՇԻՆ ԵՍԱՅԵԱՆ
(ՓԵՍՏԵՐԱՆ)

10 ՓԱՐԱ

ԽԱՊԱԽՈՂԻ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԴՆԱԲԱԹԵՐԹ

اداره خانه
ازمیرده چتور خانه
نومرو ۵۴
—
ԽՐԱ. ԳՐԱՏՈՒՆ
24000 (խան, թիւ 54
ԻԶՄԻՐ

10 ՓԱՐԱ

ԱԶԳԱՅԻՆ ԲԱՐՔԵՐ

Այն անէլ կացութիւնը, որուն մատնուած է իզմիրի Տնտեսական Խորհուրդը, Ազգ. կաշտածներու վարձքին գանձումին պատճառաւ, կ'ստիպէ մեզ ուշադրութիւն դարձնել ազգ. այս կարեւոր գործին, որ աւաճ տարիներու ընթացքին մէջ սխալ մատակարարութեան մը յայտարար նշանները կը կրէ իր վրայ:

Մի քանի խօսքով պարզենք ինդիրը: Առանց անուններով զբաղելու, ըսենք թէ՛ կան մէկ քանի, նոյն իսկ աւելի ալ. վարձակալներ, ազգովեաց, կրօնքով քրիստոնէայ. . . . , որոնք տարիներով ազգին կաշտածներուն մէջ բնակելէ վերջ, հիմա. . . չեն բարեհաճիր իրենց պարտքը վճարել իբրեւ. վարձագին. . . . :

Ահա՛ մերկապարանոց ճշմարտութիւնը, ահա՛ չափաւիջ հարուածը մեր ազգային արժանապատւութեան, ահա՛ մէկ տխուր դրուագը մեր ազգային տգրուկներուն: Այո՛, կա՞յ տգրուկէ աւելի բնորոշիք բառ մը ամեն անոնց, որոնք ազգին, համայնքի մը հասարակութեան մը մալը, արդար ստացուածքը կը



Ռուսահայ նշանաւոր երիտասարդ Արուեստագետ
ՊՐՆ. Զ. ԶԱՐԻՑԵԱՆ

գործածեն տարիներով, եւ ի փոխարէն վարձք չեն վճարեր:

Անտաշ, ամենայեւին ժողքերն իսկ զայրացնելու գոգուելու առիթ տուող այս պարագաները, չէ՛ մի որ անգամ մ'ալ կուգան հոստատեղ թէ՛ մենք, հայերս, հակառակ քաղաքակրթեայ ժողովուրդի մը համբաւը ունենայնուս, սակաւին մեր մէջ որոշ խաւեր ունինք, որոնք դժբաղդաբար կը կրեն դեռ իրենց մէջ, նախկին, բարբարոս կողոպտիչ բնագոյի մը յետին նշոյշները:

Եւ այդ ինկած մոլորքերն են որ այսօր կուգան քու երեսդ ի վար պօռալու: « Էֆենտի՛մ, ազգին մալը չէ՛, փոխանակ ուրիշը ուտելու, ինչո՞ւ ես չուտեմ, ես ալ ազգին մէկ անդամը չեմ »:


Եւ այս պոքտաբոյժները, այս մախաբոյժները, այսօր շատ են մեր մէջ, ման աւանդ իզմիրի մէջ: Անոնք քեզմէ աւելի աշխատէր են, ի հարկին չստէլի ընել կուտան իրենց պոռոտ շառլա-

թանութիւնները: անոնք ազգաւորի դիմակին տակ, գիտեն ծածկել իրենց առաւելաւորի հովերը:

Ուրախայի է տեսնել թէ, Տնտեսական Խորհուրդը ազգին արդար պահանջը գանձելու ծախար, ստիպուած է դատարանի դիմել երբ մի անգամ չնչ միշտ խցել հաշիւը բոլոր այս մախաբոյժներուն:

Թ. . .

ԴԵՊԻ ԱՊԱՆՈՎՈՒԹԻՒՆ



Մեր քաղաքական իշխանութիւնները վերջապէս ձեռք առած են կտրուկ եւ ազդու միջոցներ վեճ բառին խաղաղութիւնը տիրեցնելու համար, վերջերս չափէն աւելի իսկ խոռովուած մեր նահանգին մէջ:

Կարեւոր քայլեր առնուած են դէպի ապահովութիւն եւ այս մեղիքաւոր կը յուսադրէ որ պիտի կրնանք աւելի մեծ եւ աւելի արմատական բարեփոխումներ տեսնել մօտաւոր ապագայի մը մէջ:

Այս Զորեքցաբթի օր տեղական Զինուորական Ատեանը մանրամասնօրէն եւ խղճմտօրէն քննել է տք. տուաւ իր արդար դատաստանը Պուրմօճայի ծանօթներէն Մ. Էրիք Բաթերսընի վրայ յարձակողներուն խնդրին մէջ:

Ինչպէս արդէն թերթերը գրեցին տասը հոգի մահուան դատապարտուած են, մէկ հոգի 15 տարուան, իսկ ուրիշ մ'ալ 5 տարուան բանտարկութեան:


Ասկէ աւելի ազդու, աւելի արդար եւ աւելի արմատական դարման մը կարելի չէր ցնել մասով մը դադրեցնելս համար այն աւազակային շահաւորութիւններէն գէթ մէկ մասը, որոնք վերջին տարիներս տակնուվրայ սկսած են ցնել Այսոյնի եւ ջրջակայ նահանգները:

Իր ուղղագիտութեամբ արդէն ճանօթ եւ փորձառու Գարս Սախո Փաշա այս պահուս արդէն կը հալածէ Լեռներու թագաւորը — Զաքրբալչն — ինչպէս կը կոչուի ժողովրդականօրէն. եւ կը յուսանք թէ էլքի մը յանդի գործը:

Միւս կողմէն ալ մեր տեղական ոստիկանութիւնը հոս հոն կը ձեռքակալէ հորեղ աւազակներ, որոնք կարծես կը խրախուսուին Զաքրբալչի տարած յաղթանակներէն, այնպէս որ շատ քիչ ատենէն մահուան դատապարտուելու երկիւղէն ոտքաւահար կամաց կամաց մեր ջրջակաները պիտի մաքրուին եւ եթէ մեռն' միայն Զաքրբալն է որ պիտի կանգնի միայնակ պատնէշին վրայ:

Կառավարութեան առած այս քայլերը՝ դէպի ապահովութիւն իրօք ամենամեծ գովենալի արժանի են, եւ մենք ի բոլոր սրտէ պիտի մաղթենք որ ան կէս ճամբան կանգ չառնէր յանկարծ:

ՕՍՄԱՆՏԻ



ԽԵՆԴ ՍԷՐԸ

ՕՐ. ԷԹՈՒՍԱԼԻՆ

Այսպէս,

Գիշեր մը մենիկ, սենեակիս մէջ չուռ ջարով ջղթայուած խոկումներուս մէջ, Սրտակէց սիրոյ, հուրովն վշտակուռ, Համբեցի հանդարտ, հոգւոյս էլ եւ էջ. . . :


Նա կը խօսէր դեռ, կը շոյէր, գգուէր խորը ճիշդ հոգւոյս ու մեղմ կողմ Եսիս Յետոյ հըպումը, գլխովն սեռահեր կը մեղմացնէր ուժը պինդ կամքիս:

Տես ինչպէս սիրտս բաբախէ ուժգին Ու դեռ կըսես թէ. «Դու գիս չես սիրեր կեղծ են խօսքերդ կեղծ իմ ջրթունքին Տուած համբոյրներդ ու մեղմ գգուանքներ Տե՛ս, ինչպէ՛ս սիրտս. բաբախէ ուժգին:

Դուք մեղուներ էք եւ կիներ ծաղիկ Մանիշակէն վարդ, չեչակէն յասմիկ մեղր ու հիւթ ժողովէք: Ժամե՛ր երջանիկ, Բայց աւա՛ղ, երբ որ յագեւաք սիրով Մեզ կը չքէք ալ խեղճ կոյս եւ անխնով կը յարիք ուրիշի մը, ու խեղճ խոկմանց մէջ Այսպէս կը համբէք սրտին էլ եւ էջ. . . :


Իզմիր

ԱՐՄԵՆՈՒԴԻ ՄԵՆԱԿԵԱՆ





Դ Ե Ղ Ի Ն Բ Ա Ռ Դ Ը



ՕՐ. Մ . . . ԻՆ

Գգրչիս մէջ թուղթեր կան ոչ ղեղին սրբ հին, ցիրուցան՝ անխոյժ նետուած մէկ անկիւն. որը գրուած է գրիչի հաստ հարուածներով որն ալ վա-
փուկ մատներով:

Հոն են սրտին էջերը. մերթ բարկացաւ, մերթ երջանիկ. մերթ արշունք կայ մերթ ժպիտ. Ուշա-
գրաւ՝ մէկ բան միայն կը տեսնամ, ոսկեգոյն ժալաւէնով մը կարմիր, նուրբ կապով մը վաթ-
թուած . . . չազանակագոյն թէլթէլ մաղերու մի փունջ, եւ պստարան մը կապոյտ ու գորշ գորս թուղթերուն տակէն կը նշմարեմ, եւ ղեղին քարթ մը՝ չուսանկարուած. կոյսի մը դէմքը, հրէշաւ-
կային. ուր կայ ժպիտ մը քաւցիլի ու սեւուկ աչեր. եւ այն մաղերը ուրիշ քաղուած էր սա փնջիկ:

Զեռքս կը դուլայ ու չեմ կրնար ամոր դպիլ, կը տատամսիմ եւ թեթեւ հպու. Լով մը այդ պատ-
կերը ծածկող թերթերը. մէկ կողմ կընեմ ու ապ-
շած կը դիտեմ . . . աչերս կը պաղին, սիրտս սեղ-
մուած է. չեմ ուզեր դպիլ վասնցի ամոր սերը մեր-
ժեցի, «նամակ գրէ» կըսէր կամաց մը երբ գիւ կը տեսնար պարտեգիս մէջ ծաղիկներով զբաղած: Օր մ'ալ երկու ձիարդ ուզեց, տուի ու մին համբուրե-
լով ինն երկնցույց ու միւսն ալ գլխուն մաղերուն մէջ գետեղեց եւ եւ միշտ կը վախճայի թէ մայրս կը տեսնար . . . Ո՛վ միամիտ:

Սերը՝ զոր դուն չէիր զգացեր այն ատեն այսօր հոգիդ կը փոթորկէ ու կը զոջաս, զայն մերժած ը-
չաչուդ համար . . . աչքս մտածմանց մէջ ուրիշ թուղթ մը աչքիս կը զարնէ որ դեռ նոր է. հագիւ երկու ամսուան, եւ ուր սիրոյ երգը կայ միշտ. հոգւոյն կրակը կարծարծի եւ չուզելով գիւ վշտա-

ցնել ծանր մի խօսքով, կը մեղադրէ գիւ թէ . . . սեր չունի՞ս, անզգայ ես, ինչու՞ չես գրեր, կամ մեզի գաս քիչ մը խօսելու:


Ու նոյն թերթին վրայ իմ գիրս կը տեսնեմ. ա՛հ, չհամարձակելով ուղղակի իրեն գրել. իւր նամակին տակը սեղմեցուցեր եմ իմ զգացումս. «ներք ի՛նն. ըսեր եմ, կը սիրեմ քեզ բայց կամչնամ. . . » Ամօթ, բայց ինչո՞ւ, միթէ սէ՞րն ալ ամօթ է, հապա ինչէ՞ կեանքը, ինչէ՞ ապրիլը, ինչո՞վ պիտի կրնանք յուսալ ներկայ եւ ապագայ երջանկութիւնը, եթէ ոչ սրտին մեղքով . . . :

Ու նրա անակնկալ այցելութիւնը կսթափեցնէ գիւ, յանկարծ կը գոչեմ զգրոցս ու դէպի ինն երկն-
ցուցած ձեռքը կը համբուրեմ: Բայց նա զգրոցիս անմիջական վակուումէն հետաքրքրուելով չէր զգա-
ցած թէ ի՞նչ չլրած էի, ու կը հարցնէր, ի՞նչ են այդ թուղթերը, ի՞նչ կը կարդայիր, առանց բան մը ըսե-
լու զգրոցս բացի, Ահ մը թուաւ սրտին խորէն, իմ նամակներս, դեռ կը սլանէս զանոնք, իմ չուսա-
նկարներս, ա՛հ իմ, իմ — ձայնը մեղմեցով — իմ մա գ եր ց ս . . . :


Ս Ր Ի Ն Գ


Ի ՆՊԱՍՏ

ԱՏԱՆԱՅԻ ՈՐԲԱԽՆԱՄ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ




Ուրախութեամբ կը լսենք թէ Գարաթաշի մէջ խումբ մը բարեսէր Տիկնայք եւ Օրիորդք Ատանայի արկածելոց եւ որբերուն օգնութեան փութաչու համար մասնախումբ մը կազմած են ու պաշտօն մը պիտի բանան մօտ օրէն, առայդ շատ մը ոսկե-
րիչներ գոհարեղէներ նուիրած են որոնց անուննե-
րը յաջորդ թուով պիտի հրատարակենք, կը յուսանք որ ամէն անհատ իրեն պարտականութիւն կը համարէ որեւէ միջոցով օգտակար ըլլայ այս յան-
մախումբին եւ չի մերժել իրենց դիմողները:
Ուրախ ենք որ առաջին շաւաղոյն օրինակը ու-
կերչիները տուած են:





ԶՈՐԱՐԹ ԲՕՆԵՐԵ



ՍՐԱՄԻՏ ԵՍԻՍԶԸ

Անշուշտ ամենքնիդ ալ գիտէք թէ տարին գանի մը անգամներ օտար պետութիւններու մարտաճառեր իզմիր կուգան քաղաքը. . . գրաւելու համար, եւ քանի մը օր կենալէ վերջ կը մեկնին քիչ շատ մ'անկից ցուելէ ետք հոն հոս:

Ահա այս կարգէն են շաբթուս մէջ մեզ այցելող Տրանսական երեք գրահաւորները: Առջի օր ասոնցմէ մեկէն՝ Վիքթոր, Հիւկօնն նաւազ մը բարիգեան երգ մը սուշելէն կերթար երբ հանդիպեցաւ հրեայ նարնջավանառի:

Հրեան աչքըբաց շունչանորդի մը մեկէն սկսաւ մարդուկին մօտենալ եւ խօսիլ փրանսերէնով մը՝ որ փրանսերէնէն զատ ամէն ինչ էր:

- Ինչպէս կը ծախես, տղայ:
- Հինգ հատը չորս մէթալիք:
- Օ՛հ օ՛ շատ սուղ է:
- Բայց աւելցուց հրեան, միւսին ասոնք Եափայի նարինջներ են:

Մարդը առաւ քայլեց նախ, բայց յետոյ կարծես միտքը բան մը եկածի պէս ետ գալով:

- Քա՞նի ըսիր որ պիտի տաս, հարցուց
- Հինգը չորս մէթալիք.
- Լաւ ուրեմն, հինգը չորս մէթալիք, չորսը երեք մէթալիք: Երեքը՝ երկու մէթալիք, երկուքը մեկ մէթալիք ու մեկը՝ ձրի:

Ու գործը խօսքին միացնելով նարինջներէն մէկը առնելը ու կեղեւը խաճնելը մեկ եղաւ:

Հրեան զարմանքէն բան մը չէր կրցած ըսել՝ այս սրամիտ Մարսիլեացիին որ սակայն ճաթելոյ աւտոբան խնդալով մեկտեղ Ծ սանթիմանցով մը հրեան սթափեցաւ իր ապշութիւնէն:

ՀԱՒԱՍՐԱՊԻԹԻՒՆ

Երկու երեք տիկիներ վերջերս իզմիրի մէջ շուկան հանգանակութեան կելլեն Ատանայի Որբերուն ի նպաստ:

Հոս հոն թափառելէ վերջ վերջապէս չեն կէլլը կը նետեն հարուստ վաճառականի մը քով:

Սովորական խօսքերէ վերջ, տիկիներէ մեկը կը պարզէ իրենց այցելութեան պատճառը:

Չմոռնանք ըսելու թէ մեր ազգայիննի տուտուները առաջուանէ վստահ են եղեր քանի մը ոսկի գէթ առնել մեր մարդուկէն:

Բայց ի՞նչ մեծ կըլլայ զարմանքնին երբ կը տեսնեն թէ այդ ծանօթ վաճառականը մեծաշունչ աղմուկով մը դրամարկոյ բանալէ ետք կը հանէ . . . ութնոց մը կուտայ:

Ա՛, Եփենտի այս չեղաւ. կըսէ տիկիներէն համարձակը, մինչ միւսները մարդուն դէմքը կը նային զարմացիտ, այդպէս բան չըլլար, Եփենտի, աս անկիւնի հսկիմին տուաւ մեկ ութնոց, դուք ալ ինքզինքնիդ անոր հետ մեկ պիտի դնէք:


— Անշուշտ կը փութայ աւելցնել մեր կցցին չէք գիտեր որ սահմանադրութեան շնորհիւ ամենքնիս ալ հաւասար ենք:

..

Երեկ իրեկուան կապոյտ ակնոցներով մեկը կը մօտենայ սիրքին կիշին:

- Քանի է առաջինը
- Ութ դուրուն:
- Երկրորդը
- Հինգ
- Երրորդը
- Երեք
- Ուրեմն առ, քեզի մեկ ու կէս դուրուն կ'ըսէ մարդուն քանի որ մեկ աչքս լոյր ըլլալուն ներկայացումին կեսը միայն պիտի կրնամ տեսնել:

ՃԷՆԹԿԼԵՆ



ՔՐՕՆԻԿ

Երեքշաբթի գիշեր Հայ Դերասաններու Ընկերակցութիւնը տուաւ իր երկրորդ ներկայացումը իզմիրի մէջ: Ցաւալի է որ պետք եղածէն շատ աւելի



ՏԻԿԻՆ ԱՐԱՔՍ ԶԱՐԻՖԵԱՆ

քիչ բաշխութիւն մը փութաշաճ էր ծախաճարեղութեամբ:

Խաղին նշխար աշխարհաճանաթ էր արդէն, Անգլիացի հուշակաւոր խուղարկութեան Շէրլոկ Հոլմսն էր որ իր այնքան հիմնաւոր անարկիկութիւններով եւ գիտելով պիտի չուէր ամենաբարդ խնդիրներ, որոնք կատարեալ կորեան հանգուցեր պիտի երէւէին ոստիկանական ամենավարպետ պաշտօնեաներուն:

Ինչպէս ըսինք հակառակ թատերասրահին ակնդրեւ պարապութեանը դերակատարները զգացումով եւ ընդհանուր յաջողութիւնով ներկայացուցին բիւս: Պ. Զարիֆեան հիմնաւոր էր իր դերին մէջ, արաքաշարժ, մտածող եւ ամենէն աւելին, պաղարիւն անգլիական պաղարիւնութիւնով մը որ մահու եւ կենաց վայրկեաններուն իսկ չկորսուեցաւ իրմէ: Իզմիրցիներուն համար այս անակնկալ մը չէ իրօք քանի որ Պոլսոյ թերթերը արդէն Պ. Զարիֆեանի անուրանալի կարողութիւնը քանի քանի անգամներ հաստատեցին, բայց ասով մէկտեղ երեքշաբթի

գիշեր մեծ էր ներկաներուն վրայ թողած իր տպաւորութիւնը նախ կեղծ ծերունիի եւ յետոյ կաղ շիկամօրութիւն իր յաջող ծպտումներով:

Տիկին Զարիֆեան յուսահատ աչքին էր բնականօրէն, իր ջնորհալի շարժումներով եւ խօսուածքովը, անտարակուսելիօրէն հաստատեց թէ ունի իր պաշտօնին կոչումը, կարեւոր քան մը որ շատ անգամ կը պակսի մեր բեմերուն վրայ երեսացող դերասանուհիներէն:

Իսկ Շէրլոկ Հոլմսին հակառակորդ, Տր. Մօրիանի դերին մէջ Պ. Ենովք Շահէն ցուցուց իր ոյժը խոժոռ, անվրդով եւ սրամիտ աւագակապետի էնթրիկներուն մէջ, ան տուաւ իրմէ ակնկալուածէն իսկ աւելի յարմարութիւն մը ընդունակութիւն մը:

Այնքան իրերայաջորդ եւ շարուած տրամին մէջ միշտ արդէն աչքի զարնողն պիտի ըլլար քիչ շատ գաւեշտաբուն քիչ շատ քովիք եղողը եւ իրօք Պ. Գր. Աւետեան տեղ տեղ իր խուզարկու ոստիկանի կեղեւին տակէն իսկ ցոյց տուաւ իր կարող կատակերգայի տաղանդը: Նմանապէս բաւականէն յաջող էր Օր. Դիւանա իր կրկին դերերուն մէջ, իսկ աննշմար չէ կարելի անցնիլ պզտիկ ջարահան մանչուկ Պ. Սվանեանի վրայէն որ մասնաւոր նշաններ իսկ այժմէն ցոյց կուտայ ապագայ բեմական յաջողութիւններու: Խաղին միւս դերակատարներն ալ յաջող էին ընդհանրապէս: Հոս մեր միջոցը թոյլ չիտար մի առ մի ամեն մէկուն վրայ երկարօրէն ծանրանալ:

Տրամին յաջորդող Գօմէտին՝ «Պաշտօնս Իռմփայն է» չափէն աւելի իսկ խնդաշուք ներկայները՝ ջնորհիւ իր տաղանդաւոր թարգմանչին Պրն. Գրիգոր Աւետեանի, որ գրչի մարդէն յանկարծ կարծես կերպարանափոխուած բեմի մարդու, նուրբ կատակերգակի իր յաջող ժեսթերով եւ օգ-

նութեամբ իր միւս խաղչանկերներուն գուարթ տպաւորութիւնով մը վերջացուց ներկայացումը:

Իսկ գալով Հինգշաբթի գիշերուան «Ուրիշ Ակոստա» յի ներկայացման, ցաւալի է խոստովանիլ թէ կրկին իզմիրցին գրկուած էր բուն արուեստագետը ծափահարելու հաւոյքէն: Պրն. Զարիֆեան իրաւաւոր իր կրցաւ անմահացնել Ակոստան իր մեղաւորութեան յուսահատական դէմքով: Մեր հիացումը յուզմունքի փոխուեցաւ եւ վայրկեան մը եկաւ երբ կարծեցինք թէ արդարեւ Ակոստայի՝ ճգնաժամային վերջին բոլորները հասած են եւ ան յուսահատ, այլ բեմին վրայ ուժաւապառ պիտի խնար, երբ իրօք ան տակաւին ոյժ պիտի ունենայ լեզուեր պայքարելու, կրօնամոլ կոյր Փարիսեցիներուն դէմ եւ աղաղակելու. «եւ սակայն կը դառնայ»:

Տիկ. Զարիֆեան միշտ շնորհալի եւ նուրբ արուեստագիտունիւն հինգէ. գիշեր կրկին ցոյց տուաւ իր կարողութիւնը. իսկ Պ. Շահինի բաբունիի դերին մէջ՝ անձքը կարդացած պահուն իսկ զգացինք թէ ապաշայ մեծ արուեստագետն էր ան:

Պ. Գր. Աւետեան որքան քովիք նոյնքան եւ աւելի տուամթիք իր իննչսունամեայ ճերմունքիմը դերին մէջ կրցաւ իւր ձայնին ու շարժումներուն բնականութիւնը պահել ու մեզ հիացնել:

Ինչպէս կերեւի կարողութիւնն է որ կը պակսի խումբին քով, քաջալերութիւնն է որ կակնկալեն անոնք իզմիրցիներէն եւ այդ ալ կը կարծենք որ իրենց ամենասարդար պահանջքն է:

ՐԻՅՈՐԹԸՐ

Ժողովրդական քննադատութեան փափաքի վրայ

ՊՐ. Յ. ԶԱՐԻՖԵԱՆ

Կիրակի 29 Նոյ. կ. ե. ժամը 3 ին կը ներկայացնէ

Բ. անգամ քչալով

նշանաւոր «ՇԷՐԼՕՔ ՆՕԼՍՍ» ր

տրամ 4 արար

եւ «ԹԻՒՐԻՍԱՑՈՒԹԱՆ» քրջալիք գաւեշոյ

ԴԷՊԻ ԿԵՅԻ ԹՍՏՐՈՆԸ ՈՒՐԵՄՆ

ԶՐԿԱՆՔ

Ո՛վ սիրելիս,

Ամբան գեղածիծաղ այն օրը երբ նշուագեղ արփին անմատոյց սարերու բարձունքէն իր նուաղկոտ շառայները կը հաւքէր, զմեզ արթնող այն դիւթիջ տեսարանը ու խորհրդաւոր յուսթիւնը միտքդ բեր:

Գարնան պայծառ եղանակին արտերուն ու պարտեզներուն մէջ շրջագայած ատեն, չուրթ երկնքին ներքեւ միասին քաղած այն Թյարմ ծաղիկները այսօր իբրեւ չոր փունջ մը քեզի կուղարկեմ: Միտքդ բեր ո՛վ խոստմնագանգ գեղունի, գաղտնի ցաւերով տուայտող հոգիները, անոյց սեւ ամպերը վառող հովերն եւ ծովափին հանդարտ կոհակներն ու զով պղպջակները:

Իրիկնադեմին երբ մահամերձ արփին իր չուկէսին հասած կերթայ իր խոնջէնքը փաքատելու. միտքդ բեր ո՛վ գեղանի ու պաշտելի արարած քեզի հետ վայելած երջանիկ ժամերս ու վայրկեաններս: Եւ երբ ծովը կաշեկոծի ու հովերը կը մոնջեն երեւակայէ ո՛վ գեղանի օրիորդ մահով նշանադրուող ու ինձ նման երիտասարդ եւ տառապող հոգիները: Խոստմնադրու՛ժ, գարնան մէջ գիւ երեւակայէ: Եւ երբ խաւարը կը փաքատի, դիտէ երկնից համատեղութիւնը, մոլորակները ու բնութեան շայնածաւալ անշրպետը, եւ յուսթեամբ գիւ երեւակայէ: Միտքդ բեր ո՛վ խոստմնադրուժ, ինձի հետ շայած ու ողբացած վայրդ. տակաւին կենդանի է սրտիս մէջ այն տրտում եւ մեղամաղձիկ նայուածքդ զոր շանթի մը նման սուրաշոյքի ինձ, երբ առաւօտ մը իրարմէ կանչատուէինք, երբ անհունին վրայ կը սողար ասուպ մը մարմրող:

Ո՛վ կեանքս ցաւ է միայն, ուժս կը պակսի, սէրս գաղտնի է: Ես անբաղդ արարած մ'եմ, եւ մի քանի օրուան գերին՝ լացերուս ու ողբերուս: Տրտմաթախիժ հոշոյս երեւակայութիւնը այս եղաւ այժմ: Նայէ ո՛վ խոստմնագանգ, նայէ՛ երկնից ամպերուն, եթէ անցնի կաթկթող ամպ մը երեւակայութեանդ մէջ մտաբերէ գիւ:

(Սպարթա)

Թարգմ. Յ. Հ. Թ.



ՀԱՎԱՏԻՍԼԷՐ

Առանձնապես Տէրութեան իրմէնի գաղթեցողութեամբ եղբայրներս կէտէ վերայէն մէկքերէնէն դայրը միւս- լիւմէնէն ախլը ասքէր մուսամէլա- թընա իպթիտար օլունմըլ տըր Մա- րաշտա տախիլ էսման 1350 գատար էրմէնի տէլիքանլըսը մէկճուտտըր պունլարտան մուլիմէլի օլմահան- լար թէֆրիք իտիլտիքան սօնրա տիկէրէրի թային իտիլէնէք մահալ- էրէ կիթմէք իւզրէ հէման էմրէ ին- թիգար իտիյօրլար էրմէնիլէր ասքէ- րէ տընմաք իւզրէ պէօյիւք պիր արդու վէ հայիլ ըզհար իտուպ քէն- տիլէրինի գոյտ իտէն գապըթանա «պիզի հէօքիպէթ հէր նէրէնէ կէօն- տէրիքսէ օրայա կիտուպ Օսմանլը Ամնճաղընը տայիմա միւթէալի թու- թաճաղըք» տիյօրլար. Զապըթան մուսայիլէյհիմանլէրին հիւսիյաթը Վաթանրէրվիքանէսինի ֆէվքէլաօէ թագաիր իտիյօրլար. Գըպըստտ վէ մահալ սայիրէտէ պուլունան Ստա- նալը էրմէնի տէլիքանլըսը ասքէրէ դայա իտիլմէք իւզրէ մէմլէքէթլէ- շինէ ալտէթ իտիհօրլար իմըլ:

— Առանձնապես միւսթանէնի իշնէն իյանէ ճէմի մագաստիլէ ինկիլթէրա- տա քիպիմ Տուպլին պաշ կպիլո- պոպընլն թահթ լիյասէթինաէ պիր գոմիլիօն թէշքիլ օլունմըլտըր. Մէգ- քիւր գոմիլիօն իյանէ ճէմինէ իպթի- տտըր իթմիլ վէ էրէյի պիր մէպլազ թօփընմըլտըր:

— Բուժ Բաթրիքի Եուլաթիմ է- ֆէնտի Սինօթ մէճլիսի քիտիպլի- րինտէն էրմէնիճէ թէքիլիւմէ միւք- թէտիր օլուն պիր բուհմիլիյնէգաինէ պի ճիւպ լիտան մէգքիւրն նազարի- տթընը տախի թահիլ իթմէսինի Խալիլէ էլիմիլտիր:

«Բրօտօս» կազմեալ պու մեսի- լիտէն պահա իթիլի սըրատա բուժ- վէ էրմէնիլէր սաըրլարճա պիրապէր եաշտուըլտըր հալտէ բուժլարն էր- մենի քիլիսէսինէ տայիր մալիւմաթ գաթիլէլիւրի օլմատըլընաան վէ էր- մենիլէրտէն պիր չօղը հաթտա Բաթ- րիք Գուրհան էֆենտիլ թիքէրում- ճահա աշնա օլտուըլտըր հալտէ բուժ- լարտան հիւ պիրի էրմենիճէյը էօյ- րենմեմիլ վէ էրմենիլէրին հայաթը մեզհեպիլիսինի թիտպիզ իթմէմիլ օլ- տուղնաան տօլայը պէյան թէէսիւֆ իտիյօր:

— Ռուս պանդասը իլէ շարգ Ալա- ման պանդասը գարիպէն եէնի Օոման- լը սեյըը սէֆային գոմբանեասընը 300000 թահվիլաթընա թալիպ օլա- ճագլար տըր:

— Սիւ կաթողիկոսը Բաթրիգհանէ- յէ կէօնտէրտիկի պիր մէքթուպլա Ա- տանա նախպինին հիւսն խտմէթինտէն տօլայը պէյան մէմնունիլէթ իթմիլ վէ խիզամ պուլան միւսէթը միմուրիլէ- թին իքի սէնէ տահա թեմտիտի իշնէն Բաթրիգհանէճէ թէշեպպիւտաթ լազմ տա պուլնմասընը թալէպ էլիմիլտիր Ատանա միլէլ միւսթիլիֆէրի էտայը բուհանիլէլէրի թարաֆնտան տահի մագամ միւսիհազպ վէ մեճլիսը մէ- պուսան լիյասէթինէ պիր թէլէկրաֆ չէքիլէրէք նայիլ գոմաթիլէյին թէմ- տիտը միւսէթ մէմուրիլէթինի իսթի- տա գէնմըլտըր:

— Տիւն լիտպա իտեն մեճլիսը վիւզիլտա լիւշ մէսիլէսի հազմնաա եարըն Սատրազամ բաշանն մէճլիսը մէպուստան վէրէճէյի իզահաթա տա-

իր միւզաքերաթ ճերեան իթմիլ վէ մալիլէ նազըըը ճալիտ պիլ էֆենտի- նին տահի իսթրիթօ նիզամաթընըն մէվգէթ թատպիլէյգօնուլմասընն էս- պուպնա տաիր մէճլիսը մէպուստան իթա իտէճէկի իզահաթ թէգպիլ իտիլ- միշտիր:

— Տիւն մէճլիսը վիւքէլա իճթի- մա էլլէտիլի սըրատա մալիլէ նազը- րը ճալիտ պէյ էֆէնալիլէ թիճաթէթ վէ նաֆաա նազըըը Հալաճեան էֆէն- տի վուգու պուլան տալէթ իւզէրինէ մէճլիսի մէպուստան ազիմէթլէ օրա- տա իճթիմա էթմիլ օլան իթտիհաա վէ թէրապը ֆըրգասընա իսթրիթօ մէսէլէսինէ տա իր պազը մուսամիլաթ իթա իթմիլէր վէ պաստէհու Պապը ա- լիէ ալտիթլէ ելինէ մէճլիսը վիւքէլա միւզաքերաթընա իշթիւրաք էյլէմիլ- լիւ տիր:

ԻՐԱՆ ԱՆՉՊԻՍԼԸ

— Բէթրապուլիտան «թայմ» զա- ղէթաընա եազլողնա կէօրէ էրտէ- պիլ Բուս մաֆէրէզէսինին կէրույէ չէքիլտիկի վէ Գազվին գուվվէի տա- քէրիլէսինին տէ թէնզիլ իտիլտիլի սէ- պիպ վէ սաիքոսնըն Ռուս բօլիթիլա- սընը մուսաֆազա իտէն Իրոն միւն- գատլարը թարաֆնտան թագաիր ի- տիլէճէյի Բէթրապուլի մուհաֆիլ հը- քիւմէթինաէ էւմիտ օլունուր Ռու- սիա հըքիւմլթի Իրոն իտարէլ ի միլ- լու թանըն թահպիմ վէ թագվիլէի նուֆուզ էմրինաէ հէլկէօնա սուհու- լիթէ մազհար օլմատընը արդու խա- յօր:

ՏՊԱՐԱՆ ՕՍՄԱՆԻԷ. — Յ. ՇԷՔԻՐԵԱՆ



Ա. ՆԱԼՊԱՆՏԵԱՆ ԵՒ ԸՆԿ.

Քարաի, Մար օթելի անգթին մէջ

Ի Զ Մ Ի Ր

Ամեն տեղի, համար տոմսակներ, մասնաւորաբար
Ամերիկայի համար խիստ ածան գիներով կը տրուին:

Ապահով եւ արագ փոխադրելու պայմանաւ Պօս
տոյ եւ Եգիպտոսի համար ծրարներ եւ աւանդներ:
կընդունուին:

Ցանձնարարութիւն ամեն տեսակ ապրանք:

Ճամբորդներու համար մաքուր եւ հագստաւէտ
նաւակներ վատահելի եւ կրթեալ նաւաւարներու
միջոցաւ:

ՄԵԿՆՈՒՄ Ի Զ Մ Ի Ր Ե

Եգիպտոս — 15 օրը անգամ մը Ռումանականով:

Պօշխ — ամեն Շաքաթ օրերը խտրականով:

« Ի Զ Մ Ի Ր Լ Ի » Ի ԿԱՐԵՒՈՐ ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐԸ

Յերթիւ ազդարարութեանց գործակալութեան միակ նպատակն է, միշտ օգտակար հանդիսանալ հա-
սարակութեան:

5 դրուշով պիտի տպուին 3 տողէ ամեն տեսակ ազդեր

Նոյնպէս իր գաւառի բացմաթիւ ընթերցողաց դիւրութիւններ տալու համար՝ պատրաստ է իրեն ուղ-
ղուած ամեն տեսակ կարեւոր հարցմանց օրը օրին պատասխանել, պայմանաւ որ գրուելիք պատասխա-
նին բոլորի ծախսը դրկուի իրեն: Կընդունին ամեն տեսակ արտածման ու ներածման ապրանքաց նմուշ-
ներ, կիւնացնէ ինչպէս քաղաքիս նոյնպէս Եւրոպայի մեծ քաղաքացի մէջ անոնց ծախուած գիները:

ՊԱՇՏՈՆ ՈՒ ԶՈՂՆԵՐ

Հայերէնի, Յրանոտերէնի և հաշուա-
կալութեան համար երիտառարդ մը
պաշտօն կը փնտռէ: Թիւ 1

Յրանսերէնի, Գերմաներէնի և տո-
մարակալութեան հմուտ ուսուցիչ մը
մասնաւոր գասեր տալու պատրաստ
է, գիւրամատչելի գնով Թիւ 2

32 տարեկան ուժեղ ու գործունեայ
մարդ մը գործ կը փնտռէ, Իզմիրէ
դուրս ալ կրնայ մեկնել: Թիւ 3

Սպիտակեղէններ լուացող կին մը
և խիստ համեղ կերակուրներ երող
այրի մը տուններու մէջ աշխատու-
թեան գործ կուզեն: Թիւ 4

Երիտասարդ մը, որ ծանօթ է զրե-
թէ Անատոլիոյ բոլոր քաղաքներուն,
կ'ուզէ ո'ւ է վաճառականի մը հաշուոյն
աշխատելու: Թիւ 5

ԶԱՆԱԶԱՆ

Որտաւ ածան գնով կը ծախուին 2-
միւնիոյ մէջ տուն մը, Կէօյթէփէի
կողմ 47 արտաւար հող և մեծ վէ-
զեր խանի մէջ երկու զրասնեակներ:
Թիւ 10

Սինէմաթօկրաֆի գործակալութիւն
մը արժէթուղթերու վրայ ընկերու-
թիւն մը հիմնել կ'ուզէ: Մասնակցիլ
փափաքողք դիմել Թիւ 11

Կը փնտռուի. 350 ռոկի արժողու-
թեամբ տուն մը Հայնոցի և կամ 2-
թաղերու մէջ. — : Թիւ 18

Փոքր գրամագլխի տէրեր կը փն-
տռուին խիստ շահաւէտ գործի մ'առ-
թիւ ընկերութիւն կազմելու: Թիւ 17

4000 ոսկինոց Ֆէրհանէ մը կը ծախ-
ուի, Կիզրոն տեղ. Շէնքը կը նայի
երեք շուկայի վրայ: Թիւ 19

Վարձու սենեակներ կը փնտռուին
կահաւորութեամբ ոչ: Թիւ 21

5 000 զուտ շահերով կալուածներ
ունինք մեր տրամագրութեան տակ:
Թիւ 20

Զմիւռնիայ ամբողջ թաղերու մէջ
գիւրամատչելի գներով վարձու տու-
ներ և սենեակներ կը գտնուին մեր
տրամագրութեան տակ: Թիւ 12

Հանքային մետաղներու խիստ հե-
տաքքիւր հմ. Թիւ 14.

Ամեն տեսակ մեքենաներու յանձ-
նարարութիւններ կ'ստանձնեն: Թիւ 15:

Կը ծախուի տպագրական ձեռքի
մամուլ մը ածան գնով: Թիւ 28

ՊԱՇՏՈՆԵԱՅ ՓՆՏՐՈՂՆԵՐ

Որտաւ կարեւոր հաստատութեան մը
ամեն կողմէ ներկայացուցիչներ կը
փնտռուի: Թիւ 8

Քօմիսիօնների մը համար (ըլաւիէ)
կ'ուզուի: Թիւ 9

Հարուստ տունէ մը սպասուհի
կուզուի, 10 — 15 տարեկան: Թիւ 22

Փափագողք կրնան դիմել խմբագրատուն. կեսօրէն միւնչեւ ժամը 2